«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - «Հայոց եկեղեցին ստալինյան բռնապետության ժամանակ»: Թեմայի դասավանդման մեթոդիկան

ԱՌԱՐԿԱ	--Հայոց եկեղեցու պատմություն---
ՀԵՂԻՆԱԿ	------Անի Քիթաբչյան---------
ՄԱՐԶ	-------Արմավիր----------
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	------Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան թիվ 4 հ/դ----

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1 ..... Error! Bookmark not defined.

«ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻՆ»:. Error! Bookmark not defined.

ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... Error! Bookmark not defined.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... Error! Bookmark not defined.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..... Error! Bookmark not defined.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: XX դարի առաջին քառորդում խորհրդային կարգերի հաստատումով հազարամյա ճանապարհ անցած հայոց եկեղեցին թևակոխում է իրավազրկման, նվաստացման և գոյապահպանման ժամանակաշրջան: Կոմունիստական գաղափարախոսությունը, որ տեսականորեն ընդգրկում է մարդկության ստեղծած ամենաառաջադեմ հասկացողությունները, այդ թվում կրոնի և հատկապես քրիստոնեության, իր ստեղծման պահից հակադրված էր կրոնին: Ամենևին էլ պատահական չէր, որ խորհրդային վարչակարգի առաջին հրովարտակներով եկեղեցին անջատվում է պետությունից, դպրոցը՝ եկեղեցուց:

Երկիրը սոցիալական ծանր վիճակից դուրս բերելու նպատակով կենսագործվում է ռազմական կոմունիզմը, ապա նոր տնտեսական քաղաքականությունը (ՆԷՊ), որի արդյունքում ունեզրկվում է եկեղեցին և բռնագրավվում են եկեղեցապատկան շինությունները, իսկ կոլեկտիվացման տարիներին վանքապատկան հողատարածքները վերածվում կոլտնտեսությունների:

Միակուսակցական համակարգ հաստատելու նպատակով Հայհեղկոմը պայքար է ծավալում այլախոհության և այլախոհների դեմ: Սկսվում է սարսափելի ահաբեկչության և վայրենի կամայականության ժամանակաշրջանը: Իբրև հակահեղափոխականներ ձերբակալության են ենթարկվում բոլշևիկներին հավատացած և իրենց կյանքը հաղթողների ողորմածությանը տված նախկին հանրապետության ղեկավարությունը, մտավորականությունն ու բազմաթիվ հոգևորականներ, իսկ տասնյակ քահանաներ ստիպված հրաժարվում են հոգևոր ծառայությունից:

Եթե Անկախ Հայաստանում հայոց եկեղեցին բարձր հեղինակություն էր վայելում, հանդիսանում էր խորհրդատու հանրապետության ղեկավարների համար, ովքեր այցելում էին Մայր աթոռ՝ խնդիրների քննարկման և Վեհափառ հայրապետի օրհնությունը ստանալու նպատակով, ապա այժմ վտանգված էր անգամ Մայր Աթոռի գոյությունը:

Սակայն 1939 թվականին բռնկվեց Երկրորդ համաշխարհային հրդեհը և ԽՍՀՄ-ի առջև խնդիր դրվեց միավորել ժողովրդի ուժերը: Խորհրդային ղեկավարությունը հասկանում էր, որ

պետք է մեղմացնել շիկացած մթնոլորտը, կայունացնել երկրի ներքաղաքական կյանքը: Նկատի ունենալով եկեղեցու մեծ հեղինակությունը և ազդեցությունը հասարակության մեջ ՝ խորհրդային վարչակարգը 1940 թվականի սկզբներին առժամանակ թուլացնում է հակակրոնական քաղաքականությունը:

Իր հերթին էլ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին հայոց եկեղեցին, մի կողմ թողնելով խորհրդային վարչակարգից կրած տառապանքները և վեր դասելով ազգային շահը, բարոյական և նյութական աջակցությունն է ցուցաբերում Խորհրդային Հայաստանին: Գևորգ Զ Չորեքչյանի ջանքերով ստեղծվում են <<Սասունցի Դավիթ>> երկու տանկային շարասյունները: Հակաեկեղեցական քաղաքականությունը ավելի է մեղմանում հատկապես Ստալինգրադի և Կուրսկի ճակատամարտերից հետո, երբ խորհրդային զորքերը մոտենում են Եվրոպայի սահմաններին, իսկ եկեղեցին կարող էր մեծ դեր խաղալ ԽՍՀՄ-ի նկատմամբ Եվրոպական ժողովուրդների մոտ դրական կարծիք ստեղծելու համար:

Օգտվելով նպաստավոր պայմաններից՝ եկեղեցին դիմում է գործնական քայլերի. վերաբացվում է Էջմիածնի հոգևոր ճեմարանը և տպարանը, վերադարձվում են Խոր Վիրապ, Հռիփսիմե և Գեղարդ վանքերը, Զվարթնոցի տաճարը, բացի վանքապատկան հողատարածքներից, որոնք դարձել էին կոլտնտեսություններ: Նույնիսկ բարձրացվում է Թուրքիայից հայկական հողերը վերադարձնելու հարցը:

Սակայն 1940–ական թվականների վերջին կրկին փոխվում է ԽՍՀՄ պետական մարմինների քաղաքականությունը հայ ժողովրդի և եկեղեցու նկատմամբ: Հայկական հարցը մնում է անլուծելի, կրկին ավերվում և քանդվում են հայկական եկեղեցիներ:

Ընդհանրացնելով շարադրվածը կարող ենք փաստել, որ սույն հետազոտության թեմայի արդիականությունը, ինչպես նաև գործնական նշանակությունը ու կարևորությունը պայմանավորված է վերոշարադրյալ հանգամանքներով: Մասնավորապես Ստալինյան ժամանակաշրջանի հա-կաեկեղեցական քաղաքականության ուսումնասիրությունը թույլ կտա վեր հանել և ամբողջականացնել մարդկության պատմությանը ուղեկցած քաղաքական ահաբեկչության օրինակներից հանդիսացող ստալինյան բռնատիրական համակարգի դրսևորումները: Բացի այդ հայ ժողովրդի պատմության այդ սպիտակ էջի լրացումը կարևորվում է պատմագիտության համար

նրանով, որ այն անհրաժեշտ է ճշմարտությունը բացահայտելու, անմեղ զոհերի հիշատակը պահելու և նման անուղղելի սխալներից զերծ մնալու առումով:

Հայկական պատմագրության մեջ հանգամանալից ուսումնասիրված չեն քաղաքական բռնաճնշումները Ստալինյան բռնապետության ժամանակաշրջանում: Բնականաբար Խորհրդային վարչակարգի տարիներին հասկանալի պատճառներով հասանելի չէին արխիվային նյութերի, իսկ իշխող վարչակարգի պայմաններում կոմունիստական գաղափարախոսությունից զերծ աշխատություն հեղինակելը խնդիր էր:

Հայաստանում ստալինյան բռնաճնշումների ամբողջական ուսումնասիրությունը հնարավոր դարձավ 1990-ականների սկզբին ՀՀ ԱԱՆ արխիվը բացելուց հետո: Սակայն խնդրին առնչվող փաստաթղթերը մեծամասամբ հանդիսանում են տվյալ փաստաթղթերի պատճենները, որտեղ երևույթը ներկայացվում է իշխող կուսակցության գաղափարների մասնակցությամբ: Ուսումնասիրված գործերի տվյալներով կարելի է համոզվել, որ այդ ժամանակահատվածում չէին բացառվում նաև փաստաթղթերի կեղծումներ:

Մեր առջև դրված խնդիրն է կատարել օբյեկտիվ ուսումնասիրություն՝ բացահայտելու ճշմարտությունը և բռնել ձեռքը ահաբեկչության ճանապարհով մենատիրության վարչակարգի ձգտող իշխանության, թեկուզ և հասարակական խմբավորման, քանի որ պատմությունը կրկնվելու սովորություն ունի: Անկախ իրենց մասնագիտական ուղղվածությունից յուրաքնչյուրը պետք է իմանա, որ բռնաճնշում գործադրելը արհավիրք է, իսկ առհասարակ մատաղ սերնդի մեջ պետք է ձգտենք սերմանել մարդասիրական գաղափարներ: Սա լավագույն օրինակ է դպրոցահասակ երեխաների մեջ միմյանց հանդեպ հանդուրժողականություն, համընդհանուր շահը սեփական շահից գերադասելու, խոսքի և հայեցակարգի ճշմարտաբուխ վարքագիծ դաստիարակելու համար: Թերևս թեման համեմատաբար քիչ է ներառված դասագրքերում, առավելապես թողնված է ուսուցչի ուսերին ՝ ամբողջությամբ լուսաբանելու բռնատիրական համակարգի դրսևորումները և հայոց եկեղեցու գոյապայքարի նշանակությունն ու ազդեցությունը: Թեման կուղղորդի սովորողներին գնահատելու, պահպանելու ազգային արժեքները՝ սերունդներին փոխանցելու նպատակով:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել <<Հայոց եկեղեցին ստալինյան բռնապետության տարիներին >> թեմայի դասավանդման մեթոդները:

Հետազոտության Խնդիրներն են՝

- ներկայացնել <<Հայոց եկեղեցին ստալինյան բռնապետության տարիներին >> թեմայի բովանդակությունը,
- առաջադրել թեմայի դասավանդման մեթոդները:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտությունը տեսական նշանակություն ունի թեմայի շուրջ ուսումնասիրություն կատարողների համար և գործնական նշանակություն՝ հանրակրթական դպրոցի պատմության ուսուցիչների համար:

Հետազոտության մեթոդներ են՝

- տեսական գրականության վերլուծություն
- զրույց
- խմբային քննարկում :

Հետազոտության կառուցվածքն ու ծավալը: Հետազոտությունը բաղկացած է ներածությունից , գլուխ առաջինից , եզրակացությունից , օգտագործված գրականության ցանկից. ընդհանուր ծավալը կազմում է 27 էջ :

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԲՌՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ»: ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Հայոց պատմության բովանդակությունը բացառիկ է ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային պատմության համատեքստում: Ապրելով տարբեր իրականությունների, կայսրությունների ու մշակույթների հաղորդակցության սահմանում՝ հայ ժողովրդի պատմությունն ունեցել է քաղաքակակրթական վերելքներով ու դրամատիզմով լի ընթացք: Հայոց պատմության դասավանդման գործընթացի նպատակն է ազգային ինքնագիտակցության ձևավորումը, պատմական անցյալի հետ ծանոթացումը, անցյալի փորձի հիման վրա՝ ներկայի ճիշտ ուղու կառուցումը, ժամանակակից աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների ճիշտ գնահատումը, զարգացած աշխարհայացք ունեցող անհատի դաստիարակումը, որը օժտված կլինի հայրենասիրությամբ և համամարդկային արժեքներով:

Թեմայի դասավանդման արդյունավետությունը ամրապնդելու համար կարևոր է այնպիսի մեթոդական պլանի մշակում, որը հետաքրքրություն կառաջացնի աշակերտների մոտ՝ դասին ամբողջովին ներգրավվելու համար: Նախապես ուսումնասիրելով մեթոդական գրականություն, պետք է կազմել անհրաժեշտ պլան, որով պետք է հասնել առավելագույն արդյունքի:

Պատմության արդյունավետ դասավանդման միջոցներն են արդի մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը, որը գործընթացը դարձնում է առավել բովանդակալից, հագեցված տեղեկատվության հնարավորինս տարբեր ու բազմազան աղբյուրներով, որոնք նույն խնդրի վերաբերյալ տարբեր հայեցակետներ են պարունակում և սովորողները ձեռք են բերում սեփական մտածողությունը խթանող ճանաչողական կշռադատման նյութեր և փաստերի ու փաստարկների ինքնուրույն որոնման միջոցով փորձում են հաստատել կամ ժխտել այս կամ այն գաղափարն ու տեսակետը: Այսպես ձևավորվում է պատմական բազմատեսանկյուն մտածողությունը:

Թեմայի դասավանդման համար ընտրել եմ սովորողների տարբեր տարիքահոգեբանական խումբ (9-րդ, 12-րդ դասարան) և սովորողներ :

Նախ և առաջ, անհրաժեշտ է որոշել դասի նպատակը, որը <<դասի գլխավոր բովանդակության յուրացումն է և հիմնական աշխարհայացքային գաղափարը>>[1]: Առանձնացվում է դասի կրթական, դաստիարակչական և զարգացնող նպատակները: Ինչպես յուրաքանչյուր ուսումնական նյութի, այնպես էլ <<Հայոց եկեղեցին Ստալինյան բռնապետության ժամանակաշրջանում>> թեմայի դեպքում պետք է պահպանել եռաստիճան համակարգը՝ սովորեցնել, դաստիարակել, զարգացնել:Արդի մեթոդների և տեխնոլոգիաների կիրառությամբ նպատակահարմար է դասավանդել այս թեման ՝ ձևավորելով սովորողների մոտ բազմատեսանկյուն մտածողություն:

<< Բազմատեսանկյուն մտածողություն>> հասկացության հիմքում ընկած են երեք, միմյանց հետ փոխկապակցված բավական հին գաղափարներ .

1. << Նոր պատմություն>>
2. անցյալում պատմությունը հաճախ դասավանդվել է մեկ մշակույթի վրա հիմնվող, էթնոկենտրոն, առավելապես բացառող և ոչ ընդգրկող տեսակետից
3. << բազմամշակութայնություն>> և <<միջմշակութային կրթություն>>

<< Նոր պատմության>> գաղափարը արտացոլում է դասավանդման ավանդական մեթոդների և տեխնոլոգիաների անբավարար լինելը (պատմական պատրաստի գիտելիքների փոխանցումը, պատմության առարկայական ծրագրի բովանդակության մեջ քաղաքական և սահմանադրական ուղղվածության գերակայությունը, պատմական իրադարձություններին և անձերին չափազանցված դերեր վերագրելու միտվածությունը և այլն): Այս գաղափարի կողմնակիցներն առավել կարևոր էին համարում այն, որ սովորողներն սովորեն վերլուծել, մեկնաբանել և համադրել պատմական սկզբնաղբյուրներում և գրականության մեջ առկա վկայությունները: Հիրավի, պետք է քննադատական մոտեցում ցուցաբերել մեր թեմայի արխիվային նյութերի և Խորհրդային շրջանում ստեղծված գրականության նկատմամբ, որովհետև տվյալ խնդրին առնչվող փաստաթղթերը մեծամասամբ հանդիսանում են տվյալ փաստաթղթերի պատճենները, որտեղ երևույթը ներկայացվում է իշխող կուսակցության գաղափարների մասնակցությամբ: Ուսումնասիրված գործերի տվյալներով կարելի է համոզվել, որ այդ ժամանակահատվածում չէին բացառվում նաև փաստաթղթերի կեղծումներ, իսկ Խորհրդային

[1] 3 էջ 197

ժամանակաշրջանում ստեղծված գրականությունը տոգորված էր կոմունիստական գաղափարախոսությամբ և հանդիսանում էր ժամանակաշրջանի ջատագովը:

Երկրորդ գաղափարն այն է, որ անցյալում պատմությունը հաճախ դասավանդվել է մեկ մշակույթի վրա հիմնվող, էթնոկենտրոն, առավելապես բացառող և ոչ ընդգրկող տեսակետից: Այդպիսի դասավանդումը հիմնված է եղել այն մոտեցման վրա, որ ազգային պատմությունը համընկնում է ամենամեծ ազգային խմբի կամ տիրապետող լեզվա-մշակութային համայնքի պատմության հետ: Վերջին տարիներին պատմագրության դասավանդման գործընթացում մասնավորապես հասարակական, մարդաբանական, մշակութաբանական ուսումնասիրությունների ոլորտներում կարևորվում է հասարակական խմբերի պատմությունը: Այս տեսանկյունից կարելի է դիտարկել որպես հասարակական խումբ Խորհրդային իշխանության հովանու ներքո գործող նորոգչողականներին կամ <<Ազատ եկեղեցական եղբայրությանը>>, որը մերժում էր հայ հոգևորականությանը և Գերագույն Հոգևոր Խորհուրդը՝ իբրև միակ օրինական իշխանություն ընդունելով կաթողիկոսին: Նրանց նպատակն էր խարխլել հայ եկեղեցու հիմքերը, երկպառակտություն առաջացնել եկեղեցու ներսում, ինչպես դա տեղի ունեցավ Ռուս Ուղղափառ եկեղեցում:

Քննարկվող գաղափարներից երրորդը կապված էր այն գիտակցման հետ, որ պատմության դասավանդման գործընթացում սովորողները պետք է նախապատրաստվեն ապրելու այնպիսի աշխարհում, որը բնութագրվում է էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական բազմազանությամբ: Այսպես, Անկախության տարիներից ի վեր <<Հայոց եկեղեցին Ստալինյան բռնապետության ժամանակաշրջանում>> թեման ուսումնասիրելիս, սովորողներին հնարավորություն ընձեռվեց ազատորեն ծանոթանալ սփյուռքահայ գործիչների տեսակետներին, անմիջականորեն հասանելի դարձավ Սփյուռքի հայ մամուլը և գրականությունը, ինչպես նաև օգտվել Մոսկվայի արխիվներից:

Թեմայի արդյունավետ դասավանդման համար տեղին է նշել բազմատեսանկյուն մտածողության ձևավորման և շարունակական զարգացման գաղափարի առաջատար պաշտպաններից ՝ Գիտա Ստայներ-Խամսի խոսքերը . <<...հասարակական համերաշխությունը,

խաղաղությունը և ժողովրդականությունը ենթադրում են անցյալի, ներկայի և ապագայի ընդհանուր տեսլական>> [2]:

Քանի որ թեման բավական ծավալուն է, և տվյալ պատմական ժամանակաշրջանը նշանակալից ու շրջադարձային հայ ժողովրդի կյանքում, ուստի անհրաժեշտ է այն ներկայացնել սովորողներին առավել մանրամասն ու հաղորդել շատ գիտելիքներ:

Թեմայի ուսումնասիրման սկզբում ուսուցչի նպատակն է ներկայացնել ուսումնասիրվող տվյալ ժամանակաշրջանի հիմնական խնդիրների ամբողջական բնութագիրը: Դասի այս տեսակը մեծ աշխատանք է պահանջում ուսուցչից: Նա պետք է հետևողականորեն վերլուծաբար ներկայացնի նյութը՝ ելնելով ամբողջական բնութագրման տրամաբանությունից:

Նոր նյութի հաղորդումը իր հերթին նպաստում է սովորողների երևակայության, հիշողության, մտային կարողությունների զարգացմանը: Այն պետք է լինի գիտական, սովորեցնի մտածել, կատարել վերլուծություններ, եզրակացություններ, դասագրքի շրջանակներից դուրս ծանոթանալ որևէ այլ թեմայի հետ: Միաժամանակ կարելի է կիրառել նաև զրույցի, հարց ու պատասխանի, նկարների, քարտեզների վրա աշխատելու մեթոդները և հնարները:

Ստորև ներկայացնենք թեմայի պլանավորման օրինակը.

Դասարան - 12

Առարկա – Հայոց պատմություն

Թեմա – Հայոց եկեղեցին ստալինյան բռնապետության տարիներին

Դասի անցկացումը – Պատմության և հասարակագիտության դասարան

Դասի տիպը - խառը (դասահարցում և նոր նյութի հաղորդում)

Դասի նպատակը

- Սովորողներին ներկայացնել 1920-53 թթ. Խորհրդային վարչակարգի ծավալած հակաեկեղեցական պայքարը, պատճառները և խնդիրները, Հայոց եկեղեցու գոյապայքարը՝

[2] 1 էջ 231:

ընդդեմ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման, եկեղեցիների փակման, հոգևորականության հանդեպ ծավալված բռնաճնշումներն ու հալածանքները, որի գագաթնակետն էր Խորեն Ա Մուրադբեկյանի նահատակությունը, համեմատաբար մեղմ ժամանակաշրջան՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին Գևորգ Զ Չորեքչյանին թույլատրելի բարենորոգումները և հայրենադարձություն:

- Նպաստել սովորողների պատմական մտածողության, աշխարհայացքի ընդլայմանը: Զարգացնել սովորողների պատմահամեմատական, վերլուծական հմտությունները:
- Նպաստել սովորողների ազգային ինքնագիտակցության ձևավորմանը և հայրենասիրական դաստիրակությանը, պատմությունից առավել խորքային գիտելիքների ձեռքբերմանը:

Մեթոդներ, հնարներ - Զրույց, (հարց ու պատասխան), քարտեզ, փաստաթուղթ, վավերագրական տեսաֆիլմի դիտում (https://uic.am/3800 (բռնաճնշումները Խորհրդային Հայաստանում), https://www.youtube.com/watch?v=_G9pkydRqHE (Խորեն Ա Մուրադբեկյան),https://www.youtube.com/watch?v=3v2dWd95qi8 (Գևորգ Զ Չորեքչան)

Թեմայի հիմնական հարցեր

1. Խորհրդային կարգերի հաստատումը և Հայոց եկեղեցին
2. Քաղաքական բռնաճնշումները Հայոց Առաքելական եկեղեցու նկատմամաբ 1920-ական թթ
3. Եկեղեցու նկատմամաբ բռնությունների նոր ալիքը 1930 թվականներին
4. Հակաեկեղեցական քաղաքականության արյունոտ ժամանակաշրջան: Խորեն Ա Մուրադբեկյանի նահատակությունը
5. Հայրենական Մեծ պատերազմը և Հայոց եկեղեցին
6. Հայոց եկեղեցին հետպատերազմյան տարիներին մինչև Ի. Ստալինի մահը
7. Գևորգ Զ Չորեքչյան, կաթողիկոսական ընտրություններ
8. Զանգվածային աքսորը

Ներածական հարցեր

1. Ի՞նչ գիտեք հայոց եկեղեցու դեմ գործադրված ստալինյան բռնաճնշումների մասին:
2. Ին՞չ հետևանքներ ունեցավ հակաեկեղեցական պայքարը (սովորողները պատասխանեցին, որ ստալինյան բռնաճնշումները ընդգրկել են 1920-53 թթ-ը՝ հալածանքների ենթարկելով

բազմաթիվ հոգևորականների, փակելով եկեղեցիներ, իսկ արդյունքում թուլացել է եկեղեցու դիրքերը)

Նախնական տեղեկություններ

1920 թվականին Խորհրդային կարգերի հաստատումով հազարամյա ճանապարհ անցած Հայոց եկեղեցին թևակոխում է իրավազրկման, նվաստացման և գոյապահպանման ժամանակաշրջան: Բոլշևիկները հենց սկզբից ժխտողական և խիստ բացասական դիրք են գրավում Հայոց եկեղեցու նկատմամբ: Խորհրդային վարչակարգի առաջին հրովարտակով եկեղեցին անջատվում է պետությունից, դպրոցը՝ եկեղեցուց, որին էլ հաջորդում է Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավումը, եկեղեցիների փակումը և բռնաճնշումներն ու հալածանքները հոգևորականության նկատմաբ:

Նյութի արդյունավետ ընկալման համար սովորողների մոտ ձևավորել բազմատեսանկյուն մտածողություն. պատմական ուսումնասիրության շրջա-նակներն ընդլայնելով՝ քննել նրանց տարբեր տեսակետների միջև առկա հարաբերություններն ու հարաբերակցությունը, դիտարկել պատմական իրադարձությունների և գործընթացների շարժընթացությունը:

Թեման առավել պատկերավոր դարձնելու նպատակով դպրոցականների համար ընթերցել արխիվային փաստաթղթերից, օրինակ՝ Ս. Բեհբուդյան, Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք բ, էջ 269: Ցանկալի է դպրոցականների մոտ ձևավորել պատմական աղբյուրները վերլուծելու, վկայությունները մեկնաբանելու, տեղեկությունները համադրելու և սեփական պատմաշարը մշակելու փորձը: Այս մոտեցումը պահպանել նաև վավերագրական տեսանյութ դիտելիս: Նման համակարգի կիրառումը կարելի է կատարել հետևյալ հարցադրումներով.

- ին՞չ բնութի է ուսումնասիրվող փաստաթուղթը
- ո՞վ է ստեղծել այդ աղբյուրը
- ինչպիսի՞ն է եղել աղբյուրի հեղինակի ներգրավվածությունը իրադարձություններին՝ մասնակից, ականատես, լրագրող, մեկնաբան, պաշտոնյա
- որքա՞ն ժամանակ է անցել իրադարձությունից

- ին՞չ է այն մեզ ասում որոշակի պատմական իրադարձության կամ զարգացման վերաբերյալ

Պատմական մեկնաբանության ենթարկելով փաստաթուղթը՝ առաջադրել նաև հետևյալ հարցադրումները.

- արդյո՞ք կարելի է ստուգել տեղեկատվության արժանահավատությունը
- արդյո՞ք աղբյուրի հեղինակն առաջարկում է որոշակի եզրակացություններ
- արդյո՞ք աղբյուրի հաղորդած տեղեկությունները հաստատու՞մ են այլ աղբյուրներում առկա տեղեկությունները, թե՞ հակասում են դրանց

Ամփոփելով փաստաթղթերից ստացած տեղեկությունը՝ լրացնել հետևյալ գծապատկերը: Ընթերցել Անդրպետքաղվարչության գաղտնի բաժնի վարիչ Մուղդուսիի՝ Անդրպետքաղվարչության պետի տեղակալ Լավրենտի Բերիային) հղված <<Հայ հոգևորականության մասին>> զեկուցագրից հատված.

Զեկուցագիր հայ հոգևորականության մասին

Աղբյուրը փաստում է	**Աղբյուրից հետևում է**	**Աղբյուրում նշված է**
<<Մեր խնդիրներից ելնելով՝ մի կողմից այն վնասազերծելու և կրոնական գործունեությունը կրոնական գործունեությունը անդմալուծելու, արտասահմանյան թեմերը դաշնակների ազդեցությունից հեռու պահելու, մյուս կողմից հաշվի առնելով էջմիածնի քաղաքական նշանակաությունը արտասահմանյան թեմերի համար, ուր մինչև հիմա եկեղեցիները կրթողի, ղեկավարի	Հայ առաքելական եկեղեցին, չնայած ՉԵԿԱ-յի կատարած աշխատանքին և ԽՍՀՄ-ում իր գործունեության թուլացմանը, այնուամենայնիվ բավականին գործուն է և արտաքին չեզոքությամբ քողարկելով՝ շարունակում է հակախորհրդային գործունեություն ծավալել:	Հայաստանի կառավարությունը ոչ մի արգելք չի հարուցի կաթողիկոսի ընտրություններին, համարելով այն հավատացյալների գործը: Արգելք չի հարուցի նաև արտասահմանից պատգամավորների ժամանելուն: Վերջնականապես մշակել արքեպիսկոպոս Գևորգ

և ազգի կազմակերպչի դեր են կատարում, մեզ անհրաժեշտ է, ինչ գնով էլ լինի, էջմիածինը վերցնել մեր ազդեցության տակ: Դրա համար անհրաժեշտ է ամեն կերպ օգտագործել կայանալիք համագումարը՝ կաթողիկոս դարձնելու մեր թեկնածուին, նրա միջոցով Հայ եկեղեցու ազդեցության վրա մեր գաղտնի ղեկավարությունն ու մեզ անհրաժեշտ ուղղություն իրականացնելու նպատակով >>:

Ինչ վերաբերում է կաթողիկոսական թեկնածուին՝ խորհրդային իշխանության համար ավելի ցանկալի և ընդունելի է հայրապետական գահին տեսնել Գևորգ Չորեքչյանին՝ Խորեն Մուրադբեկյանի փոխարեն:

Չորեքչյանին, նրան նշե-լով մեր թեկնածու:

Հայպետքաղվարչությանը՝ ճշտել արքեպիսկոպոս Խորեն Մուրադբեկյանի մասին եղած տվյալները խնդիր դնելով վերջնականապես նրան վերցնել իր ձեռքը:

Հայոց եկեղեցու գոյապայքարը ստալինյան բռնաճնշումների ժամանակաշրջանում

1920-30թթ ծավալված համատարած կոլեկտիվացման շարժումը հարմար պատրվակ ծառայեց հոգևորականության նկատմամաբ բացահայտ հալածանքնաեր սկսելու համար: Այդ տարիներին, հատկապես 1929 թվականին, սկիզբ առան <<ժողովրդի թշնամիների>> զանգվածային <<բացահայտումներն>> ու ձերբակալությունները: 1930–ին սկսկվեց ստալինյան բռնությունների առաջին մեծ ալիքը և սկզբնական շրջանում ընդգրկեց հիմնականում գյուղական վայրերը:

Իբրև հակահեղափոխական տարր կամ դաշնակցության համախոհներ ձերբակալվում են բազմաթիվ հոգևորականներ, այդ թվում բոլշևիկները հաշվեհարդար են տեսնում Բագրատ արքեպիսկոպոս Վարդազարյան արքեպիսկոպոսի, եպիսկոպոսներ Արտակ Սմբատյանի, Թադեոս հարությունյանի, Իսահակ Տեր-Միքայելյանի հետ, իսկ այս ամենի գագագթնակետը՝ Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա-ի մահն էր անհասկանալի պայմաններում:

Արդյունքում՝ 1938-ին վտանգվում է անգամ Մայր Աթոռի գոյությունը: Այդ տարիներին գրանցվել է բռնության 209 դեպք 148 հոգևորականների նկատմամբ [3]:

Թերևս բռնաճնշումները համեմատաբար մեղմանում են Երկրորդ աշխարհամարտի և Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Խորհրդային իշխանությանը Հայոց եկեղեցու մատուցած ծառայությունների համար Ի. Ստալինը 1994 թ ապրիլի 19-ին հյուրընկալում է Գևորգ Զ Չորեքչյանին, որից հետո վերազարթոնք են ապրում ԽՍՀՄ տարածքում գործող հայոց եկեղեցական թեմերը, վերահրատարակվում է «էջմիածին» ամսագիրը, վերաբացվում է էջմիածնի հոգևոր ճեմարանը, տպարանը, Մայր Աթոռին է վերադարձվում գրադարանի մի մասը, վանքապատկան շենքերից մի քանիսը, Ս. Գեղարդավանքը, Ս. Հռիփսիմե և Խոր վիրապի վանքերը:

Սակայն բռնաճնշումները շարունակական բնույթ են կրում 1946 թվականից հետո: Արդյունքում ՝ 1920-53 թվականներին ծավալված հակաեկեղեցական պայքարը թուլացնում է եկեղեցու դիրքերը:

Հաղորդած նյութին ճիշտ գնահատական տալու համար սովորողների մոտ պետք է ձևավորել << պատմական հեռանկարի>> գաղափարը: Պատմությունը հաճախ ենթադրում է բացատրություն, և որպեսզի կարողանանաք բացատրել մարդկանց վարքը, պետք է հասկանանք նրանց համոզմունքներն ու դավանած արժեքները և մտածել ներկա արժեհամակարգից ու համոզմունքներից դուրս և փորձել աշխարհին նայել այնպես, ինչպես նայում էին անցյալի մարդիկ: Անցյալում կատարված գործողություններին դիտարկել նրանց ժամանակահատվածի համատեքստում:

Այսպիսի մոտեցումը կարելի պատկերել քարտեզագրման մեթոդով: Մտքի քարտեզագրումը թույլ է տալիս ստեղծել տրամագիր, որով կդասակարգվեն և կտեսակավորվեն ձեռք բերված պատմական գիտելիքները: Նմանատիպ քարտեզները կառուցվում են մեծ գաղափարի շուրջ,որից ճյուղավորվում են ավելի փոքր, ածանցված գաղափարները[4]:

[3] 2 էջ 89:
[4] 1 էջ 109:



Դասնյութը առավել հասկանալի և մատչելի դարձնելու նպատակով կիրառել եմ քառաբաժան մեթոդը: Աղյուսակում գործածել եմ նյութի հաղորդման ժամանակագրական

սկզբունքը և համեմատական մոտեցման շնորհիվ զուգահեռ ժամանակագրական հորիզոնականների պատկերով՝ սովորողները արդյունավետ կերպով կարող են ուսումնասիրել ժամանակաշրջանը, կատարված իրադարձությունները, առավել լավ ընկալել Խորհրդային իշխանության կայացրած որոշումների տրամաբանությունը, նրանց ակնկալիքները, նպատակներն ու շարժառիթները:

Նպատակը՝

1920-30-ական թթ. երկիրը ուներ լուրջ տնտեսական և քաղաքական խնդիրներ: Արդյունաբերության և գյուղատնտեսության վերականգնումը հսկայական կամք և ջանքեր էր պահանջում:	1930-39 թթ պայքար կրոնի ազգայնամոլության, դաշնակցական ուժերի դեմ: Ռազմական կոմունիզմի քաղաքականություն	Հայոց եկեղեցին մոռանալով իրեն հասցրած նվաստացումները և հալածանքները՝ կանգնեց Խորհրդային իշխանության կողքին՝ ֆաշիզմի դեմ պայքարում:	Խորհրդային կառավարությունը շարունակում հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերել եկեղեցու նկատմամբ, սակայն 40 ականների վերջին կրկին փոխվում է ԽՍՀՄպետական մարմինների քաղաքականությունը հայ ժողովրդի և եկեղեցու նկատմամբ:
Գործելակերպը՝ Զանգվածային կոլեկտիվացման	1930-39 թթ Խորհրդային իշխանությունը	Կաթ. տեղապահ Գևորգ Զ Չորեքչյանը կազմավորեց	Վերադարձվում են Հռիփսիմեի, Գեղարդի, Խոր

հետևանքով կուլակաթափվեցին բազմաթիվ հոգևորականներ, պետականացվեցին եկեղեցական շինություններ, փակվեցին եկեղեցիներ	բռնաճնշումներ էր գործադրում հակահեղափոխա-կան տարրերի, հատկապես հոգևորականների՝ հաստատելով ամենատիրություն երկրում	<<Սասունցի Դավիթ տանկային շարասյունը >>, որը 1944 ուղարկվում է ռազմաճակատ 1945 թ ապրիլի 19-ին հանդիպում Ստալինի հետ Բարեփոխումներ եկեղեցում	Վիրապի վանքերը Վերաբացվում է Էջմիածնի հոգևոր ճեմարանը, տպարանը, վանքի գրադարանը, կարգավորվում է <<Էջմիածին>> հանդեսի հրատարակությունը 1946-48 թթ կազմակերպվում է սփյուռքահայերի հայրենադարձություն

Որպեսզի դասանյութը մտապահեն, սովորողներին հանձնարարել արտագրել աղյուսակը իրենց աշխատանքային տետրերում:

Ինչպես հայտնի է դպրոցականների հիշողության մեջ տպավորվում են պատմական կերպարները, վառ անհատականությունները: Պատմական դեմքեր են համարվում նշանակալից իրադարձությունները կերտող և առաջնորդող գործիչները, որոնք իրենց հետքն են թողել պատմության մեջ: Այն թույլ է տալիս բացահայտել մարդկային գործոնի դերը մարդկային քաղաքակրթության զարգացման պատմական այս կամ այն փուլում և ունեն դաստիարակչական մեծ ներուժ:

Սովորողների մոտ արժեքային կողմնորոշումներ ձևավորելու նպատակով կիրառել եմ Վենի դիագրամը՝ համեմատելով երեք նշանավոր հոգևոր գործիչների՝ Գևորգ Ե Սուրենյանց, Խորեն Ա

Մուրադբեկյան և Գևորգ Զ Չորեքչյան: Վենի դիագրամը զարգացնում է տարբեր իրադարձություններ, գաղափարներ կամ կերպարներ համադրելու, դրանց ընդհանրություններն ու տարբերությունները դուրս բերելու հմտություններ (հավելված 1): Վենի դիագրամը բաղկացած է իրար հատող շրջանագծերից: դրանց հատման մասում գրվում են համեմատության ընդհանրությունները, իսկ չհատվող հատվածներում՝ յուրաքանչյուրին վերաբերող տարբերությունները [5]:



Բազմատեսանկյուն մտածողության դրսևորման պարագայում ակներև է դառնում այն հանգամանքը, որ որոշ պատմական իրադրություններում տեսակետների միջև առկա է որոշակի խորհրդանշական հարաբերություն: Իսկ յուրաքնչյուր դասավանդողի նպատակն է սովորողներին սովորեցնել վերլուծել և մեկնաբանել տարբեր, հակադիր տեսակետները, այլ ոչ պատմական իրադարձության մանրամասն նկարագրությունը:

Ամփոփելով նոր նյութը ՝ կարելի է կշռադատում կատարել պատմության դասվանդման գործընթացում կիրառվող քառաբաժան մեթոդի օգնությամբ: Քառաբաժան մեթոդի աղյուսակը ցուցադրվում է էլեկտրոնային ակտիվ գրատախտակին: Սովորողները գծապատկերում են աղյուսակն այնպես, որ հորիզոնական և ուղղահայաց վանդակների մեջ մտքերը համապատասխանաբար մուտքագրվեն չորս բաժիններից յուրաքանչյուրում: Այս մեթոդը լավ

[5] 2 էջ 54:

հնարավորություն է՝ նյութը բազմաբնույթ ուսումնասիրության ենթարկելու, միաժամանակ իրենց զգայական իմացությունը, վերլուծական մտածողությունն ու մեդիա հմտությունները զարգացնելու համար:

Ինչ՞ գիտեի Ինչ՞ իմացա

Ինչպե՞ս կարող եմ օգտագործել Ինչ՞ եզրակացություն արեցի

Ժամանակակից փոփոխվող աշխարհը, գիտատեխնիկական առաջընթացը, համաշխարհային զարգացումների դարաշրջանը, որը խորհրդանշում է նոր գիտելիքների ստեղծմամաբ, իրենց ազդեցությունն են ունենում նաև պատմության դասավանդման ոլորտի վրա: Իսկ պատմության դասգործընթացում արդի մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման պայմաններում այդ գործընթացի վերափոխումն ու որակի բարելավումը դառնում են անհրաժեշտություն՝ վերածվելով մի գործոնի, որը նպաստում է սովորողների համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային որակների ձևավորմանն ու զարգացմանը:

Գևորգ Ե Սուրենյանց



Խորեն Ա Մուրադբեկյան

Գևորգ Զ Չորեքչյան (հավելված 1)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայ եկեղեցու և հայ ժողովրդի պատմությունն անբաժանելիորեն խարսխված են մեկմեկու. իր ժողովրդի հետ միասին եկեղեցին քայլել է պատմության քա-ռուղիներում՝ ապրելով վերելքի և անկման, հաջողությունների և փորձությունների ժամանակաշրջան: XX դարասկիզբը լի էր փորձություններով և չարաբաստիկ էր հայոց եկեղեցու համար:

Խորհրդային կարգերի հաստատումով եկեղեցին և կրոնը ենթարկվեցին նոր հասարակարգի թելադրած օրենքներին: Խորհրդային վարչակարգը վարում էր ծայրահեղ հակաեկեղեցական քաղաքականություն: Աթեիստական մոլեռանդությամբ առջնորդվող իշխանության հիմնախնիրն էր ստեղծել միակուսակցական համակարգ և կրթել կոմունիստական գաղափարախոսությամբ օժտված հասարակություն: Սկսվել էր վայրենի ահաբեկչության և կամայականության ժամանակաշրջանը:

1920-53 թթ ընդգրկող ժամանակահատվածը ճգնաժամային էր հայ եկեղեցու համար և աշխատանքի ուսումնասիրությունը մեզ հնարավորություն տվեց ուսումնասիրել այն ըստ ժամանակագրական շրջանների առանձ-նահատկությունների:

- Քաղաքական բռնաճնշումները Հայոց առաքելական եկեղեցու նկատմամաբ 1920 թվականներին
- Եկեղեցու նկատմամբ բռնությունների նոր ալիքը 1930-ական թվականներին
- Հայոց եկեղեցին Հայրենական Մեծ պատերազմի տարիներին
- Հայոց եկեղեցին հետպատերազմական ժամանակաշրջանում
- Հիմնահարցի դասավանդման կարևորությունը

Բոլորովին էլ պատահական չէր, որ 1920թ դեկտեմբերի 17 –ի որոշմամաբ Հայ -հեղկոմը դպրոցն անջատում է եկեղեցուց, իսկ երկու օր անց բռնագրավվում են Մայր Աթոռի շենքը և ունեցվածքի մեծ մասը, այդ թվում ճեմարանի շենքը, մատենադարանը, թանգարանը, տպարանը, Հռիփսիմեի, Գայանեի և Զվարթնոցի կառույցները, վանքապատկան այգիները:

Երկիրը սոցիալական ծանր վիճակից դուրս բերելու նպատակով կենսագործվում է ռազմական կոմունիզմը, ապա նոր տնտեսական քաղաքականությունը (ՆԷՊ), որի արդյունքում

եկեղեցին ունեզրկվում է, իսկ կոլեկտիվացման տարիներին վանքապատկան հողատարածքները վերածվում կոլտնտեսությունների:

Մի հարվածով մոռացվեցին հայոց եկեղեցու հազարամյակների ընթացքում ստեղծված արժեքները: Բոլշևիկները իրենց հետ բերել և Հայաստանում կիրառում էին Ռուսաստանում արդեն փորձարկված բռնության մեթոդները՝ պայքար այլախոհության և այլախոհների դեմ: Ձերբակալության ենթարկվեցին բոլշևիկներին հավատացած և իրենց կյանքը հաղթողների ողորմածությանը տված նախկին հանրապետության ղեկավարությունը, մտավորականությունն ու հոգևորականության ներկայացուցիչները, իսկ տասնյակ քահանաներ ստիպված հրաժարվում են հոգևոր ծառայությունից:

1920–ական թվականների վերջին ԽՍՀՄ-ում փաստորեն ձևավորվել էր ստալինյան բռատիրական համակարգը և Ի. Ստալինը ասպարեզից հեռացնում էր իր քաղաքական հակառակորդներին, որոնց թվում էին նաև հոգևորականները: Այսպես, 1929-ին երկրով մեկ ընթացող համատարած կոլեկտիվացման ժամանակ, դասկարգային պայքարի սրման լոզունգի ներքո, սկիզբ առան <<ժողովրդի թշնամիների>> զանգվածային <<բացահայտումներն>> ու ձերբակալումները: Նշենք, որ բռնադատված հոգևորականների մեծ մասը գյուղական քահանաներն էին, ինչը և կապված էր կուլակաթափման և պարտադիր գյուղատնտեսական աշխատանքից հրաժարվելու հանգամանքի հետ:

Արդեն 1923-24 թթ Հայհեղկոմը փակել էր 20-ից ավելի եկեղեցիներ, 1927 թ դադարում էր գործելուց Վրաստանի Հայոց թեմը, իսկ եկեղեցին պառակտելու նպատակով իշխանությունների կողմից ստեղծվել էր <<Ազատ եկեղեցական եղբայրությունը >>, որը ձգտում էր փոխարինել Մայր Աթոռին:

Հայաստանի ազգային արխիվում պահպանվել են բռնադատված հոգևորա-կանների իրական կենսագրությունները և բռնադատման վկայությունները: Հարկ է նշել, որ 1920-30 թթ. ուսումնասիրված արխիվում գրանցված են 12 հոգևորականների, այդ թվում հայ առաքելական, ավետարանական և կաթոլիկ եկեղեցիների ճանաչված գործիչներ Սրապիոն եպիսկոպոս Սամուելյանի, Գյումրու հայ ավետարանական համայնքի ղեկավար Ռափայել Մելիք-Ադամյանի, Մխիթարյան միաբանության վարդապետ Ներսես Ակինյանի, ինչպես նաև մոլականների աղանդի

ղեկավարներ Միխաիլ Զադորնիկի, Միխաիլ Տելեգինի, Իոն Մորոզովի և Ֆեոդոր Կանավալովի գործերը :

Այսպիսով 1920-30 ական թվականներին Հայ առաքելական եկեղեցին հայտնվեց օրհասական վիճակում ՝ հաղթահարելով ամբողջատիրական համակարգի ստեղծած դժվարությունները և պայքարում էր նրանց կոշտ քաղաքականության դեմ:

Հայաստանում ստալինյան բռնությունների առաջին մեծ ալիքը սկսվեց 1930 թվականին և սկզբնական շրջանում ընդգրկեց գյուղական վայրերը, որտեղ անց էին կացնում զանգվածային կոլեկտիվացումը: Բնական է, որ գյուղական շրջաններում մեծ հեղինակություն վայելող, առավել գրագետ և հիմնականում տնտեսություններ ունեցող հոգևորականները պետք է հայտնվեին հալածվողների առաջին շարքերում: Միայն 1930-1933 թթ. կուլակաթափման պատրվակով բռնադատվում են 89 հոգևորականներ:

Թերևս առաջադեմ քայլ էր, որ երկար ձգձգումներից հետո, ի վերջո, խորհրդային իշխանությունները թույլ են տալիս Գևորգ Ե Սուրենյանցի մահվանից երկու տարի անց՝ 1932 թ նոյեմբերի 12-ին, բացել Ազգային եկեցեղական ժողովը . կաթողիկոս է ընտրվում խորհրդային իշխանության համար ոչ այդքան նախընտրելի թեկնածու Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը: Նա հայրենասեր և սկզբունքային անձնավորություն էր, հարում էր դաշնակցական կուսակցությանը: Բնականաբար, այս ամենը դուր չէր գալու բռնատիրական վարչակարգին: Անվերապահորեն չընդունելով նրա մահվան վարկածը՝ սրտի կաթված, հանգելու ենք այն եզրակացության, որ նա էլ մեկն է ստալինյան բռնություններին զոհ գնացած հոգևորականներից:

1930-38 թվականները մահաբեր և արյունոտ էին հայ եկեղեցու համար: Բռնադատվեցին շուրջ 132 քահանաներ, որոնց մեղադրականների մեծ մասում նշված էր հակահեղափոխական և հակախորհրդային գործունեություն:

Սակայն 1939 թվականին բռնկվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը և ԽՍՀՄ-ի առջև խնդիր դրվեց միավորել ժողովրդի ուժերը: Խորհրդային ղեկավարությունը հասկանում էր, որ պետք է մեղմացնել շիկացած մթնոլորտը, կայունացնել երկրի ներքաղաքական կյանքը: Նկատի ունենալով եկեղեցու մեծ հեղինակությունը և ազդեցությունը հասարակության մեջ ՝ խորհրդային

վարչակարգը 1940 թվականի սկզբներին առժամանակ թուլացնում է հակակրոնական քաղաքականությունը:

Իր հերթին էլ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին հայոց եկեղեցին, մի կողմ թողնելով խորհրդային վարչակարգից կրած տառապանքները և վեր դասելով ազգային շահը, իր բարոյական և նյութական աջակցությունն է ցուցաբերում Խորհրդային Հայաստանին: Նրա ջանքերով ստեղծվում են <<Սասունցի Դավիթ>> երկու տանկային շարասյունները: Հակաեկեղեցական քաղաքականությունը ավելի է մեղմանում հատկապես Ստալինգրադի և Կուրսկի ճակատամարտերից հետո, երբ խորհրդային զորքերը մոտենում են Եվրոպայի սահմաններին, իսկ եկեղեցին կարող էր մեծ դեր խաղալ ԽՍՀՄ-ի նկատմամբ եվրոպական ժողովուրդների մոտ դրական կարծիք ստեղծելու համար:

Օգտվելով նպաստավոր պայմաններից՝ եկեղեցին դիմում է գործնական քայլերի. Գևորգ Չորեքչյանի ջանքերով վերաբացվում են Էջմիածնի հոգևոր ճեմարանը և տպարանը, վերադարձվում են Խոր Վիրապ, Հռիփսիմե և Գեղարդ վանքերը, Զվարթնոցի տաճար, բացի վանքապատկան հողատարածքներից, որոնք դարձել էին կոլտնտեսություններ: Նույնիսկ բարձրացվում է Թուրքիայից հայկական հողերը վերադարձնելու հարցը և այդ նպատակով Ի . Ստալինը խրախուսում էր 1946-48 թվականներին հայրենադարձությունը:

Սակայն 1940–ական թվականների վերջին կրկին փոխվում է ԽՍՀՄ պետական մարմինների քաղաքականությունը հայ ժողովրդի և եկեղեցու նկատմամբ: Հայկական հարցը մնում է անլուծելի, կրկին ավերվում և քանդվում են հայկական եկեղեցիներ: Իսկ 1949-ին հունիսի 14-ին բռնկված հայության զանգվածային աքսորով դեպի Ալթայի երկրամաս, եկեղեցին կրկին վերապրում է իր ամենամռայլ ժամանակշրջաններից մեկը, որովհետև աքսորյալների թվում էին նաև հայրենադարձվածներ, որոնց մեծ մասը հենց Գևորգ Զ Չորեքչյանին էին մեղադրելու այս գործում:

1953 թվականի մարտի 5-ին ավարտվում է մեծ բռնապետի՝ Ի. Ստալինի ժամանակշրջանը, իր ետևում թողնելով խեղված ճակատագրեր և խոնարհված եկղեցիներ, անաստվածության քարոզարշավ: **1920-53 թվականները կարելի է բնութագրել որպես հայոց եկեղեցու ակման և վերելքի, հոգևոր արժեքների իրավազրկման և գոյապահպանման, հաջողությունների և փորձությունների ժամանակշրջան**:

Դպրոցում շատ կարևոր է, որպեսզի հնարավորինս չափ մատչելի և հասկանալի անցնեն <<Հայոց եկեղեցին ստալինյան բռնապետություն ժամանակաշրջանում>> թեման, սովորողները կարողանան վեր հանել և ամբողջականացնել մարդկության պատմությանը ուղեկցած քաղաքական ահաբեկչության օրինակներից հանդիսացող ստալինյան բռնատիրական համակարգի դրսևորումները:

Մեր առջև դրված խնդիրն է սովորողների մոտ ձևավորել բացահայտելու ճշմարտությունը և բռնելու ձեռքը ահաբեկչության ճանապարհով մենատիրության վարչակարգի ձգտող իշխանության, թեկուզ և հասարակական խմբավորման, քանի որ պատմությունը կրկնվելու սովորություն ունի: Անկախ իրենց մասնագիտական ուղղվածությունից յուրաքանչյուրը պետք է իմանա, որ բռնաճնշում գործադրելը արհավիրք է, իսկ առհասարակ մատաղ սերնդի մեջ պետք է ձգտենք սերմանել մարդասիրական գաղափարներ: Թեման կուղղորդի սովորողներին գնահատելու, պահպանելու ազգային արժեքները՝ սերունդներին փոխանցելու նպատակով և անմեղ զոհերի հիշատակը պահելու ու նման անուղղելի սխալներից զերծ մնալու առումով:

Շատ կարևոր է, որպեսզի դասավանդման մեթոդներին նույնպես ուշադրություն դարձվի: Եվ ավելի շատ կիրառվի ինտերակտիվ մեթոդներ, որոնց շնորհիվ սովորողը ավելի ակտիվ կդառնա: Դասընթացի ընթացքում, սովորողներին հնարավորություն տալ օգտվել գիտական գրականությունից, բացի դասագրքում տրված բուն նյութից, պահանջել համապատասխան տեղեկություն ձեռք բերել տվյալ թեմայի շրջանակներում:

Մեր կարևոր դիտարկումներից մեկն էլ այն է, որ ցանկացած հասարակության պետական ինստիտուտները, հասարակական-քաղաքական, հոգևոր և մշակութային կառույցներն առանց նեղ անձնական նկրտումների, օրենսդրության ընձեռած շրջանակներում պարտավոր են գործել ի նպաստ սեփական ժողովրդի ու ինքնիշխան պետականության:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Եփրիկյան Ա.,** Պատմության դասավանդման արդի մեթոդներ և տեխնոլոգիաներ, Երևան, 2021:
2. **Մանուկյան Ն.**, Ինչու՞, ինչպե՞ս, Պարադիգմա ,կրթական հիմնադրամ, Երևան, 2020:
3. **Պապոյան Հ.,** Պատմության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2013թ.: